Գևորգ Կեսոյան

ՊԵՏԱ-ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱ-ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ 1925-1934 ԹԹ.

Բանալի բառեր. Կառուցվածքային միասնության ամբողջականացում, ԿՎՀ կանոնադրություն, ԲԳՏ վերակառուցում, խմբերի ձևավորում, տեսչական խորհրդակցություն, մասնագետների ակտիվ, ԿՎՀ-ԲԳՏ ժողկոմատի վերացում:

Խորհրդային համակարգի ամրապնդման և կայունացման հետ զուգահեռ տեղի էին ունենում նոր փոփոխություններ նաև պետական ու կուսակցական վերահսկողության համակարգում: Դրանք, հիմք ընդունելով պետության առջև դրվող նոր մարտահրավերներնը և տնտեսական նոր քաղաքականությունները, վերակառուցում էին վերահսկողության այդ համակարգը՝ նպատակ ունենալով ճկունացնելու այն, հստակեցնելու գործունեության շրջանակներն ու մեթոդները, ստեղծել կառուցվածքային ամբողջականություն և, ի վերջո, նպաստել պետության որդեգրած քաղաքականության արդյունավետ իրականացմանը: Այս ելակետից ելնելով՝ 1925-1934 թթ. քայլեր են նախաձեռնվում ամբողջացնելու Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի (այսուհետև՝ ԿՎՀ)[1] և Բանվորա-գյուղացիական տեսչության (այսուհետև՝ ԲԳՏ)[2] ժողովրդական կոմիսարիատի (այսուհետև՝ ժողկոմատ) միասնությունը, ստեղծվում են նոր ենթակառուցվածքներ :

1923-1924 թթ. կառավարման բարձրագույն մարմինների կողմից ընդունված մի շարք որոշումներ սահմանում էին պետական և կուսակցական վերահսկողության մարմինների միավորում, որը տեղի է ունենում 1924 թ. ապրիլին: Սակայն այդ որոշումների արդյունքում չի ստեղծվում մեկ միասնական միաձույլ մարմին: Միաձուլման խնդիրը շարունակում է մնալ քննարկվող առաջնահերթ հարցերից մեկը: Խնդրին 1925 թ նոյեմբերի 26-ին անդրադառնում է ՀԿ(բ)Կ ԿՎՀ 3-րդ նստաշրջանի 4-րդ պլենումը, որտեղ բանաձևվում է. «ԿՎՀ պլենումն անհրաժեշտ է համարում ԿՎՀ և ԲԳՏ ամբողջական միավորումը՝ բարձրագույն կուսմարմինների ընդունած որոշումների հիման վրա»[3]: Հարցը քննարկման առարկա է դառնում 1925 թ. նոյեմբերի 30-դեկտեմբերի 4-ը կայացած ՀԿ(բ)Կ 4-րդ համագումարում: «Կենտ[րոնական] Վերահսկիչ Հանձնաժողովի և Բան-գյուղտեսչության միացման լիակատար իրագործումը,- կարդում ենք 4-րդ համագումարի ընդունած որոշման մեջ,- գտնել անհրաժեշտ»[4]: Համագումարն ընտրում է նաև ԿՎՀ-ի նոր ավելի ընդարձակ կազմ՝ բաղկացած 48 հոգուց[5]: 1925 թ. դեկտեմբերի 4-ին կայացած ՀԿ(բ)Կ ԿՎՀ-ի 4-րդ նստաշրջանի 1-ին պլենումի նիստը, քննելով ԿՎՀ-ԲԳՏ միասնական նախագահի հարցը, այդ պաշտոնում ընտրում է Դանուշ Շահվերդյանին, որը սակայն գտնվում էր Հայաստանի սահմաններից դուրս[6]: 1926 թ. մարտին ԿՎՀ-ԲԳՏ նախագահ է նշանակվում Շավարշ Ամիրխանյանը[7]:

---

[1] Կոմունիստական կուսակցության վերահսկողության մարմինը: Հայաստանում ձևավորվել է 1921 թ. մայիսին: Նպատակ է ունեցել հետևելու կուսակցության ներքին կարգուկանոնին, կուսակցականների վարքին, վերջինների կողմից կուսակցական որոշումների կիրառմանը, ապահովելու կուսակցկան շարքերի ամբողջականությունը և պայքարելու խմբակայնության դեմ: 1924 թ. միավորվելով Բանվորա-գյուղացիական տեսչության հետ համատեղ իրականացրել են պետական բոլոր ոլորտների վերահսկողություն:

[2] Ժողովրդական կոմիսարիատ, որը Հայաստանում ձևավորվել է Հայհեղկոմի 1921 թ. հունվարի 4-ի դեկրետով: Հանդիսացել է պետական վերահսկողության բարձրագույն մարմինը: Հսկողություն է իրականացրել բոլոր ոլորտների վրա: 1924 թ. միավորվել է Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի հետ:

[3] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 91, ց. 2, գ. 25, թ. 8:

[4] «Հայաստանի կոմունիստական կուսակցության 4-րդ համագումարի բանաձևերը», Ե., 1925, էջ 19:

[5] Նախորդ համագումարում ընտրված կազմը բաղկացած էր 17 անդամից և 5 թեկնածուից:

[6] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 91, ց. 2, գ. 25, թ. 21:

[7] Տե՛ս Պողոսյան Շ., Լենինյան վերահսկողությունը գործողության մեջ, Ե., 1978, էջ 67:

Կարելի է կարծել, թե տեղի է ունենում ԿՎՀ-ի և ԲԳՏ-ի վերջնական միաձուլում մեկ մարմնի մեջ: Այս ամենի արդյունքում Շ. Պողոսյանը «Լենինյան վերահսկողությունը գործողության մեջ» աշխատությունում եզրակացնում է, որ «շտկվեց միավորման «անորոշությունը»»[1]: Սակայն, կարծում ենք, որ այդ երկու մարմինների վերջնական միաձուլում երբեք էլ տեղի չի ունեցել, այլ պարզապես հաստատվել է կուսակցական վերահսկողության հսկողություն պետականի նկատմամբ: Նշենք, որ ԿՎՀ-ԲԳՏ կազմում հստակ սահմանազատված էին կուսակցական և պետական վերահսկողություն իրականացնող հատվածները՝ Կուսկոլլեգիան և ԲԳՏ Կոլլեգիան: Միաժամանակ ԲԳՏ-ն հաշվետու էր ԿՎՀ-ի առաջ, մինչդեռ ԲԳՏ-ին չէր թույլատրվում խառնվելու կուսակցականներին վերաբերող հարցերի քննությանը:

Վերը հիշված ԿՎՀ-ի պլենումներում և ՀԿ(բ)Կ համագումարում քննարկվում են նաև ԲԳՏ կազմին և գործունեությանը վերաբերող հարցեր: ԲԳՏ-ի ընդհանուր կազմի որակական մակարդակը համարվում է անբավարար և որոշվում է ԲԳՏ կազմն ուժեղացնել բարձրակարգ կոմունիստներով, ավելացնել Կոլլեգիայի անդամների թիվը՝ այն հասցնելով 5-ի, ԲԳՏ-ին տալ լրացուցիչ միջոցներ՝ աշխատողների քանակի և նրանց վարձատրության ավելացման համար, կրճատել ԲԳՏ-ի ծրագրային և արտածրագրային առաջադրանքները՝ հետազոտությունների որակը բարձրացնելու համար:

1925 թ. դեկտեմբերի 24-ին կայացած ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի (այսուհետև՝ ժողկոմխորհ) կարգադրիչ հանձնաժողովի նիստը քննության է առնում ԲԳՏ-ի ֆինանսական վիճակի և աշխատակազմի վերաբերյալ հարցեր: Որոշվում է «…բ) գտնել, վոր ԲԳՏ-ն իր յուրահատուկ աշխատանքների շնորհիվ, առանձնապես կարիք է զգում կենտրոնացնելու իր շուրջը վորակյան աշխատակիցներին յեվ նոցա խրախուսելու նպատակով նա պետք է կատարի անհատապես աշխատավարձի վորոշ անհատական հավելում առանձին մասնագետների նկատմամբ:

դ) գտնել ԲԳՏ գոյություն ունեցող շտատը բոլոր հանձնարարությունների կատարման համար ոչ բավարար յեվ ի նկատի ունենալով, վոր կենտրոնի (խոսքը Անդրկովկասի կառավարման բարձրագույն մարմինների մասին է-Գ.Կ.) կողմից ԲԳՏ 1925-26 թթ. որինակելի շտատըհաստատված է 42 հոգուց անհրաժետ համարել ավելացնել բաց թողնվելիք աշխատավարձի դոտացիայի չափը 4000ռ. մինչեվ 4500ռ.»[2]:

Նախընթաց շրջանում ԲԳՏ-ի համար հաստատված առանձին կանոնադրությունների նմանությամբ այս անգամ առանձին կանոնադրություն է հաստատվում ԿՎՀ-ի համար: 1926 թ. հունիսի 7-ին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի Կազմբյուրոն հաստատում է «ՀամԿ(բ)Կ Կենտրոնական վերահսկողության հանձնաժողովի մասին» և «Միութենական հանրապետությունների, երկրամասային և մարզային կոմունիստական կուսակցության Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի մասին» կանոնադրությունները, որոնցով սահմանվում էր ԽՍՀՄ-ի և Միութենական հանրապետությունների ԿՎՀ-ների գործունեության շրջանակները[3]:

Առաջին կանոնադրությամբ կուսակցական բնագավառում ԿՎՀ-ի հիմնական խնդիրներ էին համարվում կուսակցության միասնության պահպանումն ու նրա շարքերի ամրապնդումը, կուսակցականների կողմից կուսակցական կանոնների, ծրագրերի և համագումարների որոշումների խախտումների դեմ պայքարը, հակակուսակցական խմբավորումների ու կուսակցության ներսում ֆրակցիոնիստական դրսևորումների դեմ պայքարը, բյուրոկրատիզմի և քաշքշուկների դեմ պայքարը և այլն: Պետական ապարատի բնագավառում ԿՎՀ-ի հիմնական խնդիրներն էին պետական մարմինների գործողություններում կուսակցական գծի ապահովումը, ԲԳՏ-ի աշխատանքների ընդհանուր ղեկավարումը, վերջինի միջոցով տնտեսության, պետական ապարատ աշխատանքների, հասարակական կազմակերպությունների գործունեության ուսումնասիրությունը,

[1] Նույն տեղում:
[2] ՀԱԱ, ֆ. 113, g. 3, գ. 194, թ. 141:
[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 91, g. 2, գ. 63, թթ. 1-10

Կենտկոմին կուսակցական, պետական և տնտեսական մարմինների ղեկավար անձնակազմի ընտրության ժամանակ աջակցելը և այլն[1]:

Մյուս կանոնադրությունը որոշակիացնում էր միութենական հանրապետությունների, երկրամասային և մարզային Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի կառուցվածքը, աշխատանքի ձևերը, կուսմարմինների և ՀամԿ(բ)Կ ԿՎՀ-ի հետ փոխադարձ կապը: Համաձայն կանոնադրության՝ հանրապետական, երկրամասային և մարզային ԿՎՀ-ները ընտրվում էին համապատասխան համագումարների կամ կոնֆերանսների կողմից և հաշվետու էին նրանց: ԿՎՀ-ի կազմըբաժանվում էր աշխատանքային 3 խմբի՝ ԿՎՀ-ԲԳՏ-ում մշտական աշխատանքի համար, ԲԳՏ-ի և ԿՎՀ-ի տեղական մարմիններում աշխատելու համար և արտադրության ու հողագործության մեջ աշխատելու համար: Կանոնադրությունը հստակեցնում էր նաև ՀամԿ(բ)Կ ԿՎՀ-ի հետ փոխհարաբերությունները: Ըստ որի՝ ՀամԿ(բ)Կ ԿՎՀ-ի կողմից տրված ընդհանուր հրահանգները և առանձին հանձնարարությունները պարտադիր էին հանրապետական ԿՎՀ-ների համար: Վերջինները պարտավոր էին սահմանված ձևով և ժամկետներում ՀամԿ(բ)Կ ԿՎՀ ներկայացնել հաշվետվություն իրենց գործունեության վերաբերյալ, ինչպես նաև իրենց բոլոր նիստերի արձանագրությունները, տված կարգադրություններն ու հրահանգները[2]:

Նշված ժամանակաշրջանում ձեռնարկվում են տարբեր քայլեր պետա-կուսակցական վերահսկողության մարմնի աշխատանքների արդյունավետության բարձրացման համար: Այդպիսի նպատակաուղղվածություն ուներ 1925 թ. մայիսին Անդրկովկասի ԲԳՏ Կոլլեգիայի կողմից ընդունված «ԲԳՏ աշխատանքների մեթոդների մասին» կանոնները: Այս փաստաթղթով կանոնակարգվում էին ԲԳՏ-ի կողմից կազմակերպչական և գործառնական ոլորտներում իրականացվող բոլոր աշխատանքները: Սահմանվում էր աշխատողների հաշվառման, նրանց կողմից իրենց կատարած ստուգումների գրանցման, աշխատանքային պլանների և ծրագրերի կազմման, ժամկետների սահմանման, հաշվետվությունների կազմման, ներկայացման և հաստատման ձևերը[3]:

Միաժամանակ ընդունվում է նաև ԲԳՏ տեսուչներին ուղղված հրահանգ, որով վերջիններս պետք է ղեկավարվեին ուսումնասիրման աշխատանքներ իրականացնելու ժամանակ: Համաձայն այս հրահանգի՝ հետազոտողներին տրվող մանդատների վրա հստակ նշվելու էին հանձնարարությունը և կատարման ժամկետները: Տեսուչները ունենալու էին օրագրեր, որոնցում արձանագրվելու էին կատարված հետազոտական աշխատանքները ըստ օրերի: Նրանք հետազոտվող կազմակերպություններում կազմակերպելու էին խորհրդակցություն, որտեղ պարզաբանումներ էին տալիս անցկացվող աշխատանքների նպատակների և իրականացման մեթոդների մասին, ինչպես նաև խորհրդակցության միջոցով աշխատողներին ներգրավելու էին հետազոտական աշխատանքներին: Տեսուչը արձանագրված թերությունների մասին տեղեկացնում է կազմակերպության ղեկավարությանը և քննարկում խորհրդակցության ընթացքում, տալիս առաջարկություններ դրանք վերացնելու կապակցությամբ: Հավաքված նյութերի հիման վրա՝ տեսուչները զեկուցում են ներկայացնում ԲԳՏ: Զեկուցումը պետք է բաղկացած լիներ 3 մասին՝ ներածություն, հարցի բուն շարադրանք և եզրակացություն[4]:

1925 թ. դեկտեմբերի 4-ին կայացած ԿՎՀ նիստում խնդիր է դրվում վերակառուցման ենթարկել ԲԳՏ կառուցվածքը[5]: 1926 թ. հունվարի 7-ին ԲԳՏ ավագ տեսուչ Ղազարյանը ներկայացնում է վերակառուցման նախագիծը[6]: Հունվարի 26-ին կայացած ԲԳՏ վերակառուցման հարցը քննող հանձնաշողովի նիստը որոշակի փոփոխություններից հետո հավանություն է տալիս ծրագրին, որով նոր արմատական վերակառուցման էր ենթարկվում ԲԳՏ կառուցվածքը[7]: Այս փոփոխությամբ ԲԳՏ-ն այսուհետ բաղ-

[1] Տե՛ս նույն տեղում, թթ. 1-2:
[2] Տե՛ս նույն տեղում, թթ. 6-10:
[3] Տե՛ս նույն տեղում, ֆ. 128, g. 1, գ. 1272, թթ. 11-15:
[4] Տե՛ս նույն տեղում, թթ. 16-18:
[5] Տե՛ս նույն տեղում, ֆ. 91, g. 2, գ. 25, թ. 11:
[6] Տե՛ս նույն տեղում, ֆ. 128, g. 1, գ. 25, թ. 29:
[7] Տե՛ս նույն տեղում, թ. 1:

կանալու էր պլանային և արտապլանային տեսչություններից (վերջինները բաժանվում էին սեկցիաների) և կազմակերպական բյուրոյից: Պլանային տեսչության մեջ էին մտնելու արդյունաբերության և աշխատանքի, գյուղատնտեսության, մշակութա-լուսավորության, առևտրա-սպառողական, ֆինանսական, նախահաշվի և հաշվետվության, վարչական տեխնիկայի սեկցիաները: Պլանային տեսչության մեջ էր ընդգրկվում նաև պետապարատի բարելավման բաժինը: Արտապլանային տեսչության համար պարտադիր են համարվում ինժիների, տեխնիկի, գյուղատնտեսի, կոոպերատորի, մշակութա-լուսավորական աշխատողի և վարչատնտեսի մասնագիտական հաստիքները[1]: Արտապլանային տեսչությունը, ինչպես երևում է 1926-27 թթ. հաստիքային ցուցակից, իր ուշադրությունը կենտրոնացնելու էր կատարման ստուգման աշխատանքների վրա: Այն բաղկացած էր լինելու կատարման վերահսկման և ստուգման, հանրապետական պլանների կատարման, բարձրագույն մարմինների առանձին հանձնարարությունների կատարման սեկցիաներից: Նրա կազմում էր ընդգրկվելու նաև Բողոքների բյուրոն[2]: Արտապլանային տեսչությունը իրավունք ուներ կատարելու ուսումնասիրություններ ինչպես ԲԳՏ-ից հանձնարարություն ստանալուց հետո, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ ԲԳՏ Կոլլեգիայի կողմից հաստատվելուց հետո:

Կազմբյուրոն վարելու էր ԿՎՀ-ի և ԲԳՏ-ի վարչատեխնիկական գործունեությունը: Այն կազմված էր լինելու 3 բաժնից (գրասենյակ), տեղեկատվա-իրավաբանական և ֆինանսա-տնտեսական բաժիններից: Կազմբյուրոյի նախագահին նշանակելու էր ԿՎՀ-ն[3]:

ԲԳՏ վերակառուցման վերաբերյալ ընդունված փաստաթղթով սահմանվում էին նաև փաստաթղթերի ու նամակների ընդունման, գրանցման, դասակարգման և ուղարկման կարգը, ներքին փաստաթղթաշրջանառության և ԿՎՀ-ի հետ գրագրության կարգը, գաղտնի թղթակցության կարգը, արձանագրությունների կազմման ձևը, անձնակազմին և գործավարությանը վերաբերող մի շարք հարցեր:

Հաջորդ տարի փոխվում է նաև ԿՎՀ-ԲԳՏ-ի աշխատանքային պլանների և ծրագրերի կազմման եղանակը: 1927 թ. ապրիլի 1-ին ԲԳՏ-ին կից Տեսչական կազմի խորհրդակցության նիստում քննարկվում է շահագրգռված գերատեսչությունների հետ ծրագրերի նախնական համաձայնեցման հարցը, որը համարվում է նպատակահարմար և անհրաժեշտ[4]: ԿՎՀ-ԲԳՏ-ն այսուհետ իր աշխատանքային պլանների կազմմանը մասնակից էր դարձնում տարբեր հիմնարկների ու կազմակերպությունների: 1927-28 թթ. աշխատանքային պլանի մշակմանը մասնակցեցին Ժողտնտխորհի և Հայկոոպի նախագահությունները, Ֆինանսների, Հողագործության և Աշխատանքի ժողկոմատները, Պետպլանը, գավառային գործադիր կոմիտեները, Ջորագէսշինի վարչությունը և բազմաթիվ այլ մարմիններ[5]:

Միաժամանակ հիմնարկ-ձեռնարկություններին իրավունք էր վերապահվում ԿՎՀ-ԲԳՏ-ին ներկայացնել խնդիր իրենց կազմակերպություններում ստուգման անհրաժեշտության մասին: Այդպիսիք քննարկվում էին ԿՎՀ-ԲԳՏ-ի կողմից և կարող էին ընդգրկվել աշխատանքային պլանում:

Նկատի ունենալով վերը շարադրվածը՝ մենք կհամաձայնենք Շ. Պողոսյանի եզրակացության հետ, որ «ԿՎՀ-ԲԳՏ-ի աշխատանքների պլանավորման այդպիսի մեթոդը խորապես դեմոկրատական էր»[6]:

Այսքանով չեն սահմանափակվում կառուցվածքային փոփոխությունները, և ԲԳՏ-ի կառուցվածքը փոփոխվեց նաև 1929 թ.: Ապրիլի 28-ին ԲԳՏ Կոլլեգիան քննում է ԲԳՏ կառուցվածքի հարցը և նպատակահարմար է համարում այն բաժանելու խմբերի: Ձևավորվում են ֆինանսա-տնտեսական, գյուղատնտեսական, հաշվապահության և հաշ-

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 1 և շրջ, 6:
[2] Տե՛ս նույն տեղում, գ. 35, թթ. 35-36:
[3] Տե՛ս նույն տեղում, թ. 9:
[4] Տե՛ս նույն տեղում, գ. 300, թ. 21:
[5] Տե՛ս Պողոսյան Շ., նշվ. աշխ., էջ 106:
[6] Նույն տեղում:

վետվության, արդյունաբերա-շինարարական, խորշինարարության խմբերը: Շարունակելու էին գործել արտապլանային տեսչությունը և Բողոքների բյուրոն[1]:

1929 թ. հունվարի 31-ին Շ. Ամիրխանյանը ազատվում է ԲԳՏ ժողկոմի պաշտոնից: Նրա փոխարեն այդ պաշտոնում նշանակվում է Սեդրակ Սարգսյանը[2]:

1929 թ. հոկտեմբերի 11-ին ՀՍԽՀ ԲԳՏ ժողկոմատը հրաման է ընդունում հանձնարարությունների ստացման և կատարման մասին, որով կանոնավորվում էին ժողկոմատի ստացած հանձնարարությունների կատարման ամբողջ ընթացակարգը: Հրամանով հստակեցվում էին հանձնարարությունների կատարման ժամկետների և կատարողների, ուսումնասիրման աշխատանքների կազմակերպման, արդյունքների ամփոփման և եզրակացությունների և առաջարկությունների կազման, վերջինների կենսագործման հարցերը[3]: Այս հրամանով առավել հստակություն էր մտցվում հանձնարարությունների կատարման գործընթացի մեջ:

Վերահսկողության իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով ԲԳՏ-ին կից կազմակերպվում են տարբեր ենթակառուցվածքներ: Այդ շարքում առաջիններից մեկը ԲԳՏ-ին կից գործած հանրապետական հաստիքային հանձնաժողովն է, որի գործունեության նպատակներն էին պետական մարմինների կառուցվածքի մշակումն ու հաստիքների պլանավորումը: 1924 թ. դեկտեմբերի 20-ին կայացած ՀՍԽՀ ժողկոմխորհի տնտեսական խորհրդակցության նիստում որոշվում է ԲԳՏ-ին կից ստեղծել հանրապետական հաստիքային հանձնաժողով, որը կազմված էր լինելու ԲԳՏ ժողկոմից (հանձնաժողովի նախագահ), ԲԳՏ, Անդրկովկասի ֆինանսների ժողկոմտի Հայաստանի Լիազորության, աշխատանքի ժողկոմատի և Հայաստանի արհեստակցական միությունների խորհրդի ներկայացուցիչներից[4]: ՀՍԽՀ ժողկոմխորհի կարգադրիչ հանձնաժողովը 1925 թ. մարտի 6-ին որոշում է ընդունում, որ բոլոր պետական և տնտեսական հիմնարկների հաստիքները նախքան տնտեսական խորհրդակցության հաստատմանը ներկայացնելը պետք է ներկայացվեն ԲԳՏ-ին կից հաստիքային հանձնաժողովի քննությանը[5]: Հանրապետական հաստիքային հանձնաժողովը պետք է զբաղվեր «պետական մատակարարման մեջ գտնվող հիմնարկների հաստիքների ինքնակրճատումով»[6]: Ընդ որում՝ կրճատումների հետևանքով չէր կրճատվելու աշխատավարձի ընդհանուր ֆոնդը, այլ տնտեսված գումարը թողնվում էր հիմնարկի ղեկավարի տրամադրության տակ, որը կարող էր այն օգտագործել գործնական և արտադրական տարբեր նպատակներով:

Բացասական նշանակություն ուներ այն երևույթը, որ 1926 թ. դրությամբ գործում էին 4 հանրապետական հաստիքային հանձնաժողովներ, որոնք առաջ էին բերում աշխատանքի անհամաձայնություն: 1926 թ. վերջին ՀԿ(բ)Կ կենտկոմը և ԿՎՀ Նախագահությունը նման բազմազանությունը և ավելորդ ծախսատարությունը վերացնելու նպատակով հաստիքների կարգավորման գործը կենտրոնացնում են ԿՎՀ-ԲԳՏ-ի ձեռքում: Սակայն 1927 թ. ԲԳՏ-ն միջնորդություն է ներկայացնում ՀՍԽՀ ժողկոմխորհի առջև հանրապետական հաստիքային հանձնաժողովը վերացնելու մասին, որը ժողկոմխորհի մայիսի 18-ի նիստում արժանանում է հավանության[7]:

Կարևոր նախաձեռնություն էր ՀՍԽՀ ԲԳՏ-ին կից տեսչական խորհրդակցության կազմավորումը, որը նպատակ էր հետապնդելու որակավորման և ակտիվության բարձրացման միջոցով բարձրացնելու ԲԳՏ աշխատակիցների աշխատանքների արտադրողականությունը[8]: 1925 թ. դեկտեմբերի 5-ին կայացած տեսչական խորհրդակցության նիստում, իսկ 1926 թ. հունվարի 13-ին ԲԳՏ Կոլլեգիայի նիստում քննվում և հաստատ-

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 63, թ. 7:
[2] Տե՛ս ՀՍԽՀ «Որենքների յեվ կարգադրությունների ժողովածու», 1929 հունվար-մարտ, N 1, բ. II, էջ 22:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 313, թ. 84 և շրջ.:
[4] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 193, թ. 122:
[5] Տե՛ս նույն տեղում, գ. 194, թ. 30:
[6] Նույն տեղում, ց. 39, գ. 966, թ, 13:
[7] Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 743, թ. 9:
[8] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 128, ց. 1, գ. 195, թ. 28:

վում է տեսչական խորհրդակցության կանոնադրությունը: Համաձայն վերջինի՝ խորհրդակցության խնդիրներ էին համարվում ընթացիկ աշխատանքների մեթոդական ձևերի մշակումը, աշխատանքի արտադրողականությունը և աշխատակիցների որակավորումը բարձրացնելուն, վերջինի ինքնապատրաստմանը միտված միջոցառումների իրականացումը, աշխատանքի տեխնիկայի հնարավորինս բարելավումը: Այդ խնդիրների լուծման նպատակով պետք է կազմակերպվեին զեկուցումներ և բանավեճեր առանձին տեսչական խմբերի և տեսուչների կատարած աշխատանքների, աշխատանքի գիտական կազմակերպության հարցերի, մեթոդական եղանակների վերաբերյալ, տրվեին հաղորդումներ խորհրդային օրենքների և շինարարության մասին և այլն: Տեսչական խորհրդակցության ընդունած բոլոր որոշումները ենթական էին հաստատման ԲԳՏ Կոլլեգիայի կողմից[1]: Խորհրդակցության ղեկավարման հարցը քննվում է 1926 թ. դեկտեմբերի 18-ին կայացած ԲԳՏ Կոլլեգիայի նիստում և որոշվում է, որ ղեկավարումը դրվում է պետապարատի բարելավման խմբի վրա, որի ղեկավարը համարվելու էր տեսչական խորհրդակցության նախագահը: Նպատակահարմար համարվեց ձևավորել նախագահություն՝ կազմված նախագահից և 2 անդամից, որոնք ընտրվում էին խորհրդակցության կողմից: Խորհրդակցությունը իր նիստերը գումարելու էր ամիսը 1 անգամ[2]:

Կառավարման տեխնիկայի բարելավումը գիտական մեթոդների պահանջների համապատասխան կատարելու նպատակով ԲԳՏ-ին կից կազմավորվում է ՆՕՏ-ը (ռուս.՝ Научная организация труда, հայ.՝ Աշխատանքի գիտական կազմակերպություն)[3]: 1925 թ. ԲԳՏ-ին կից հրավիրվում է խորհրդակցություն՝ ՆՕՏ-ի կառուցվածքային խնդիրների քննարկման համար: Խորհրդակցությունը որոշում է ՆՕՏ-ի Բյուրոյին հանձնարարել ստեղծել նոր բջիջներ, արտադրական հանձնաժողովներին կից կազմակերպել ՆՕՏ-ի սեկցիաներ (գործել են կազմակերպչական, արտադրության և աշխատանքի, վարչական, առևտրական, հաշվապահության ու հաշվետվության, քարոզչա-հրատարակչական սեկցիաները): ՆՕՏ-ի ընդհանուր հրահանգավորումը դրվում է Պետապարատի բարելավման խմբակի վրա: ՆՕՏ-ի Բյուրոն կազմվելու էր 5 հոգուց, որից երեքը լինելու էին Պետապարատի բարելավման խմբակից, մեկական՝ Արհմիության խորհրդից և Գերտնտխորհից: Հետաքրքիր էր այն հանգամանքը, որ որոշվել էր խնդրել Երևանի պետական համալսարանին կազմակերպելու «ՆՈՏ-ի առարկաների դասատվություն», որոնց պետք է հաճախեին նաև ՆՕՏ-ի բջիջների անդամները[4]:

ԲԳՏ-ին կից գործել է նաև հաշվային խորհուրդ: Վերջինիս կանոնադրությունը հաստատվել է Ժողկոմխորհի կողմից 1925 թ. դեկտեմբերի 30-ին[5]: Հաշվային խորհուրդը հսկողություն էր իրականացնելու հիմնարկների հաշվային աշխատանքների վրա:

Պետական մարմինների աշխատանքների բարելավման կողքին ԲԳՏ-ն թիրախավորել է նաև սեփական աշխատանքների կառուցման գործը: 1925 թ. որոշվում է ստեղծել ԲԳՏ որոշվում է ստեղծել ԲԳՏ ժողկոմատի կառավարման տեխնիկայի բարելավման կազմակերպական բյուրո ԲԳՏ Կոլլեգիային կից: Կազմբյուրոյի նպատակն էր ԲԳՏ-ի կառուցվածքի ու գործունեության մշտական ուսումնասիրությունը և կատարելագործումը[6]: Կազմբյուրոյի խնդիրներն էին աշխատանքի և նրա համակարգման, հաշվետվության և վերահսկման գոյություն ունեցող ձևերի մշտական ուսումնասիրությունը, գործերի կազմակերպման, ԲԳՏ մարմինների կազմակերպական կառուցվածքի ռացիոնալացման ծրագրերի մշակումը, նախագծերի կենսագործումը: Կազմբյուրոն իրավունք ուներ անմիջականորեն կապվելու հիմնարկների բոլոր բաժինների ու միավորների հետ և նրանցից ստանալ նյութեր, հետևելու կազմբյուրոյի հաստատած նախագծերի կենսագործմանը, հանդես գալու նախագծերի քննարկման և աշխատակիցների գործնական առաջարկությունները և եզրակացությունները լսելու համար խոր-

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 28 և շրջ:
[2] Տե՛ս նույն տեղում, գ. 300, թ. 57:
[3] Տե՛ս «Խորհրդային Հայաստան: Հինգ տարի: 1920-1925 թթ.», Յերևան, 1926, էջ 403:
[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 128, g. 1, գ. 195, թ. 8 և շրջ.:
[5] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, g. 3, գ. 196, թ. 58 շրջ.:
[6] Տե՛ս նույն տեղում, ֆ. 128, g. 1, գ. 193, թ. 15:

հրդակցություն հրավիրելու նախաձեռնությամբ, հատուկ աշխատանքների կամ փորձաքննության համար հրավիրելու ժամանակավոր աշխատակիցների, գրականության, սարքավորումների, նյութերի և այլնի ձեռքբերման համար միջոցների առանձնացման հրահանգավորման և այլն: Պարտավոր էր ուսումնասիրել ժողկոմատի բաժինները և նրանց գործողությունները, կազմել նրանց կատարելագործման նախագծեր, հրահանգավորել նախագծեր իրականացնող աշխատակիցներին, հաշվետվություն տալ Կոլլեգիային և այլն[1]:

Կազմբյուրոյի աշխատանքների առավել կանոնավորման էր ուղղված վերջինի աշխատանքների արդյունավետության բարձրացման վերաբերյալ 1926 թ. ընդունված հրահանգը: Այս փաստաթուղթը նպատակ ուներ բարձրացնելու աշխատանքների թափանցիկությունը և հստակությունը. անդրադառնում էր կազմբյուրոյի կողմից գործադրվող կրճատումների և ներգրավումների իրականացման ձևերին, աշխատանքների կատարման կանոնավորմանը, գումարների տեղաշարժի մասին տեղեկությունների կազմմանը, կազմբյուրոյի կատարած աշխատանքների գնահատման եղանակներին[2]:

Վերահսկության և ստուգման աշխատանքների արդյունավետության բարձրացման գործում կարևոր իրողություն էր տարբեր մասնագիտությունների տեր անձանց ներգրավումը այդ աշխատանքներում: Այս առումով նշանակալի իրողություն էր ԲԳՏ-ին կից մասնագետների ակտիվի ձևավորումը: 1929 թ. օգոստոսի 20-ին Հայաստանի շինարարների միության ինժիներա-տեխնիկական սեկցիայի հանրապետական բյուրոն որոշում է շինարարության կատարելագործման նպատակով ԲԳՏ-ին կից կազմակերպել ինժիներների և տեխնիկների ակտիվ: Վերջինի մեջ ընդգրկվելու էր Բյուրոյի ամբողջ կազմը[3]: 1929 թ. սեպտեմբերի 19-ին ՀՍԽՀ ԲԳՏ Կոլլեգիան որոշում է ԲԳՏ ուսումնասիրման աշխատանքներում ներգրավելու համար ստեղծել մասնագետների ակտիվ: Վերջինը պետք է կազմավորվեր հասարակական հիմունքներով: Մասնագետները կցվելու էին ԲԳՏ-ի համապատասխան խմբերին, որոնց ղեկավարները պետք է ծանոթացնեին մասնագետներին ԲԳՏ ծրագերի և աշխատանքների մեթոդների հետ, ներգրավեին ծրագրերի մշակմանը: Մասնագետների ակտիվի ընդհանուր ղեկավարումը, նրանց ներգրավման ու խմբերի մեջ բաժանելը դրվում էր ԲԳՏ-ի կազմակերպա-հրահանգչական բաժնի ղեկավարի վրա[4]:

1929 թ. հոկտեմբերի 17-ին գումարվում է մասնագետների ակտիվի առաջին կազմակերպական խորհրդակցությունը, որտեղ որոշվում է ծառայեցնել մասնագետների գիտելիքները և փորձը կապիտալ շինարարության բարելավման և էժանացման, շինարարության տեմպերի արագացման և նմանատիպ այլ ձեռքբերումների համար: Ակտիվում ընդգրկվում էին Ինժիներա-տեխնիկական սեկցիայի կողմից ներկայացված 27 մարդ, որոնցից 12-ը ինժիներներ էին, 10-ը՝ տեխնիկներ, 4-ը՝ ճարտարապետներ և 1-ը՝ տնտեսագետ[5]:

Գյուղատնտեսական հարցերի ուսումնասիրման համար նույնպես ներգրավում են համապատասխան մասնագիտություններ ունեցող անձինք՝ գյուղատնտեսներ, անտառապահներ, սեյսմոլոգներ, թվով 22 մարդ: Վերջինները ներկայացվել էին Հողագործության և անտառների միության կողմից[6]:

1930 թ. հունվարի 17-ին ԽՍՀՄ ԿՎՀ-ԲԳՏ կազմակերպա-հրահանգչական բաժնի ղեկավարը շրջաբերական է ուղղում բոլոր մարզային, երկրամասային և հանրապետական ՎՀ-ԲԳՏ-ներին՝ կոչ անելով ակտիվացնել մասնագետների աշխատանքները: Համաձայն շրջաբերականի՝ ակտիվը կատարելու էր ուսումնասիրություններ ինչպես ԲԳՏ խմբերի հանձնարարությամբ, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ: Մասնագետները կարող էին առաջ քաշել հարցեր, որոնք կարիք էին զգում իրենց ուսումնասիրու-

[1] Տե՛ս նույն տեղում, թթ. 15-17:
[2] Տե՛ս նույն տեղում, թթ. 21-23:
[3] Տե՛ս նույն տեղում, գ. 48, թ. 10:
[4] Տե՛ս նույն տեղում, թ. 4 և շրջ.:
[5] Տե՛ս նույն տեղում, թ. 2:
[6] Տե՛ս նույն տեղում, թ. 2 և շրջ.:

թյան, ներկայացնել առաջարկություններ դրանց լուծման համար: Անհրաժեշտության դեպքում ակտիվը կարող էր ընտրել Բյուրո՝ աշխատանքները ղեկավարելու համար[1]:

1929 թ. ԲԳՏ կազմակերպա-հրահանգչական բաժնին կից ստեղծվում է ինֆորմացիոն բյուրո, որի դերը կարևոր էր ինչպես կուսակցական և պետական վերահսկողության մարմինների միջև փոխադարձ կապի և համագործակցության ապահովման գործում, այնպես էլ ԿՎՀ-ԲԳՏ-ի գործունեության մասին տեղեկությունների տրամադրման ու տարածման հարցում[2]:

1931 թվականից ԲԳՏ-ին կից գործել է նաև գների տեսչություն: Վերջինս հսկողություն է սահմանել գների կայունության, սահմանված գների պահպանման, ապրանքների գնման և վաճառման ընթացքում գների ճշտության, ապրանքների գների իջեցման, ինչպես նաև չափ ու կշռի և մաքուր քաշի կիրառման, ապրանքների որակի և մաքրության պահպանման, սպասարկման որակի և նմանատիպ այլ հարցերի վրա:

Այսպիսի կառուցվածքով ԿՎՀ-ԲԳՏ ժողկոմատը իր գործունեությունը շարունակում է մինչև 1934 թ. սկիզբը: 1934 թ. հունվարի 26-փետրվարի 10-ը կայացած ՀամԿ(բ)Կ 17-րդ համագումարը որոշում է ընդունում վերացնել ԿՎՀ-ԲԳՏ ժողկոմատը: Որոշման մեջ ասվում է. «ԲԳՏ ժողկոմատը, որն արդեն կատարել է իր դրական դերը, վերացնել և նրա ապարատը հանձնել ՍՍՀ Միության ժողկոմխորհի սովետական վերահսկողության հանձնաժողովին»[3]: ԲԳՏ-ից առանձնացված ԿՎՀ-ի մասով որոշվում է. «Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովը վերակազմել կուսակցության համագումարի կողմից ընտրվող՝ ՀամԿ(բ)Կ Կենտկոմին կից կուսակցական վերահսկողության հանձնաժողովի»[4]:

ՀԿ(բ)Կ-ն պետա-կուսակցական վերահսկողության ժողկոմատի վերակառուցման հարցը քննարկում է իր 9-րդ համագումարում: «ՀԿ(բ)Կ 9-րդ համագումարն ամբողջությամբ և լիովին հավանություն ե տալիս ընկ[եր] Կագանովիչի թեզերի կուսակցության (ՀամԿ(բ)կ-Գ.Կ.) 17-րդ համագումարում, մասնավորապես վերահսկիչ մարմինների վերակառուցման նկատմամբ»[5]:

1934 թ. ապրիլի 2-ին ՀՍԽՀ կենտգործկոմը, հիմք ընդունելով ԽՍՀՄ կենտգործկոմի և ժողկոմխորհի 1934 թ. փետրվարի 11-ի «ԽՍՀՄ ԺԿԽ-ին առընթեր խորհրդային վերահսկողության հանձնաժողով կազմակերպելու մասին» որոշումը, որոշում է վերացնել Բանվորա-գյուղացիական տեսչության ժողկոմատը[6]:

Այսպիսով՝ 1925-1934 թթ. իրականացվում են ԿՎՀ-ԲԳՏ կազմակերպա-կառուցվածքային մի շարք փոփոխություններ: Նախ քայլեր են կատարում ԿՎՀ-ի և ԲԳՏ-ի միաձուլումն ամբողջացնելու ուղղությամն: Իրականացվում են փոփոխություններ ԿՎՀ-ԲԳՏ ժողկոմատի կառուցվածքում. ստեղծվում են տեսչություններ և խմբեր: Ժողկոմատի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով վերջինին կից ստեղծվում են մասնագիտացված նոր ենթակառուցվածքներ: Սակայն, 1934 թ. դադարեցվում է ոչ միայն կուսակցական և պետական վերահսկողության մարմինների համատեղ աշխատանքը, այլ նաև կտրուկ իջեցվում է պետական վերահսկողության գլխավոր մարմնի կարգավիճակը՝ ժողկոմատից վերածելով ժողկոմխորհին կից գործող հանձնաժողովի:

Геворг Кесоян, Организационно-структурные изменения органов государственно-партийного контроля и создание новых подразделений в 1925-1934 гг. После формирования законодательной базы для объединения органов государственного и

---

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 60, թ. 16:
[2] Տե՛ս Պողոսյան Շ., նշվ. աշխ., էջ 123:
[3] «ՍՄԿԿ-ն համագումարերի, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում», հ. 6, Ե., 1989:
[4] Նույն տեղում, էջ 174:
[5] «ՀԿ(բ)Կ IX համագումարի սղագրական հաշվետվություն», Յերևան, 1936, էջ 453:
[6] Տե՛ս ՀՍԽՀ «Որենքների յեվ կարգադրությունների ժողվածու», 1934 թ. ապրիլ, N 4, Բաժին I, էջ 127-128:

партийного контроля, возникает вопрос завршения организации их целостности. Однако, видно, что полное слияние этих двух органов не состаялось. На примере утверждения в предшествующем периоде отдельного положения для РКИ, на этот раз утверждается отдельное положение для ЦКК. Предпринимаются шаги в для изменения состава РКИ, в результате чего, она разделяется на специальные группы. Однако изменение общей структуры ЦКК и РКИ, которое было направлено на ликвидацию разъединеня Партколлегии и Коллегии РКИ, не состоялось.

За исследуемый нами период при ЦКК-РКИ были созданы новые подразделения: совещание инспекторов, актив специалистов, счетный совет, организационное бюро, инспекция по ценам, которые были целенаправлены на улучшение структуры ЦКК-РКИ, способов и методов работ, повышение производительности труда.

Полагая, что наркомат ЦКК-РКИ в 1934 г. завершил свою главную роль, он был ликвидирован сначала в СССР, затем в ССРА.

Ключевые слова: Организация целостности структурных соединений, положения Центральной контрольной комиссии, реконструкция Рабоче-крестьянской инспекции, формирование групп, совещание инспекторов, актив специалистов, ликвидация народного комитета ЦКК-РКИ.

Gevorg Kesoyan, Organizational and structural changes and the new infrastructures of the state controlling authorities in 1925-1934. After the formation of the legislative base for the unification of state controlling authorities, the task is to complete its organizational unity. However, it is clear that the merger of these two bodies did not take place. During the previous period, following the example of creating a separate charter for the WPI, a separate charter is established for the PCC. Steps are being taken to change the composition of the WPI, as a result of which it was divided into professional groups. Nevertheless, there is no change in the overall structure of the PCC-WPI, which would be aimed at the elimination of its separated parts, the Party Collegium and the WPI Collegium.

During the period under review as part of the PCC-WPI, there have been created new infrastructures, such as consultation of inspection, active of professionals, accounting council, price inspection, aimed at improving the structure, forms and methods of PCC-WPI.

Considering that the PCC-WPI Commissariat had fulfilled its important role, in the 1934 it was abolished first in the Soviet Union, then in ASSR.

Key Words: Completion of structural unity, PCC charter, WPI reconstruction, creation of groups, consultation of inspection, active of professionals, elimination of the PCC-WPI commissariat.